

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵՔՈՆ № 253.

ՄՇԱԿ

Վճարագրութիւնը բաց է առ առտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
հարաւորապէս բառին 2 կոպեկ:

ՏԵԼԵՔՈՆ № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ

„ՄՇԱԿ“

(25-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կես տարվանը՝ 6 ռուբլի
Հասցեն. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ». Արտատպանից՝ ТИФЛИС, Rédaction «MSCHAK»

Ուրբաթ, ապրիլի 25-ին, ժամը 11-ին, խօջովանքի գերեզմանատանը հողհանդիստ է կատարվելու:

ԲԱՑՅԻՒ

գերեզմանի վրա, նրա մահվան իններորդ տարեդարձի առիթով: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջիկայ քաղաքային ընտրութիւնները, կրե-
տէի պերեպետը.—ՆԱԽԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
տենագրութիւն. Նամակ Արդարաւից. Նամակ
խմբագրութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պատերազ-
մի դաշտից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—
ԲԱՆԱՍԻՍԱԿԱՆ. Նամակ Մոսկովայից:

ԱՌԱՋԻԱՅՑ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Մայիսի 18-ին քաղաքային ձայնաւորներ-
ի ընտրութիւն է նշանակված, ընտրողա-
կան ցուցակներն արդէն տպագրելու, զանա-
զան խմբեր նախապատրաստական ցուցակ-
ներ են կազմում, և այդ պատճառով մենք
պարտք ենք համարում նորից վերադառ-
նալ քաղաքային ընտրութիւնների խնդրին:
Նախ այս յօդուածով մի քանի խօսք
կանենք նախապատրաստական ժողովների
մասին: Որքան մեզ յայտնի է, քաղաքա-
յին ներկայ ընտրութիւնների առիթով
նոր կուսակցութիւններ և ընտրողական
նոր խմբեր չեն կազմված: Նոյն հին կու-
սակցութիւնը, որ 1893-ի ընտրութիւննե-
րին «Գործողայա կուսակցութիւն» անու-
նով միջոցով գործում է և այժմ, իր
շարքերի մէջ ունենալով զինաւորացի

ԲԱՆԱՍԻՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ապրիլի 7-ին

Ապրիլի 6-ը Մոսկովայի հայ գաղութի համար
սովորական կիրակի օրերից չէր. և այդ ոչ թէ
Մոսկովայից արտաքին, այլ հասարակական
ընտրութիւն ունեցող մի քանի ժամանա-
կակից երեւոյթներով:

Պարզ, գեղեցիկ եղանակ էր: Եկեղեցին լի էր
պճնված հայ տիկիներով և օրերգներով, որոնց
նոր զինաւորների ծաղիկները կատարեալ «ծաղ-
կաղարդ» էին ներկայացնում... Իսկ պարոնները:
Ս, նրանց արտաքին տեսքն այնքան չափաւոր
կերպով արտայայտում էր նրանց անձնական
բարօրութիւնը, որ եթէ Մոսկովայի պարոնը տես-
նէր զբանջանաւոր փրփուրը բերանին կը
զրէր, չտուտ, թէ հայերի մէջ այժմ թշուա-
ռութիւն է տիրում. ես տեսայ Մոսկովայում մի-
այն գէր, ինքնաբաւական, կենսաւորաւ և չքեղ

հին ձայնաւորներին, և այն էլ մեծ մա-
սամբ հանգուցեալ իզմայովի կողմակից-
ներին, ապա ուրեմն մի այնպիսի կուսակ-
ցութիւն, որ ընդհանրապէս համակրելի
է: Այդ խմբի մէջ այժմ գործում են զԸԼ-
խաւորապէս այն անձինք, որոնք ձեռք
ձեռքի տուած իզմայովի հետ 1893 թւին
իրանց թող տուեցին այն խոշոր անասկ-
ութիւնը, որի դաւն պատուիրը մեր
քաղաքային ինքնավարութիւնը այժմ էլ
վայելում է... Բացի «Գործողայա կուսակ-
ցութիւնից», այժմ կազմվել են երկու նոր,
փոքրիկ խմբեր, որոնցից մէկը, աւելի զօ-
րեղը, իրան միտել է «Կովկասեան կու-
սակցութիւն» անունով, այն պատճառով,
որ իր ժողովների տեղ ընտրել է «Կովկաս»
հիւրանոցը: (Նորոշ է, որ մեր քաղաքային
կուսակցութիւնները սխալ են կազմվել ոչ
թէ որ և է զապաւարական անունով, այլ
Թիֆլիսի հիւրանոցների անուններով).... Ուր-
քան մեզ յայտնի է «Կովկասեան» կուսակ-
ցութիւնը ընդհանրապէս համարալիս չէ
«Գործողայա» կուսակցութեան հետ, և
այդ արդէն մեզ հիմք է տալիս կարծելու,
որ դա, համեմատաբար, աւելի համակրելի
սկզբնաւորներով է զինավարժում: Այդ վեր-
ջին խումբը, օրինակ, ազգայնական տեսա-
կէտը ընտրութիւնների գործում բոլորը
վրէն չէ ընդունում, և կողմակից է դուժա-
ւի մէջ, որքան կարելի է, նոր մարդիկ

հաղնված հայեր...: Տօթը և երգեցողութեան
աններգահանութիւնը այնքան ստակալի էին, որ
ուսանողների և երիտասարդ վաճառականների
բռնած դիրքը եկեղեցու բակում աւելի անկեղծ
կարելի էր համարել: Ըստ սովորութեան, այդ-
տեղ մարդիկ խումբ-խումբ կանգնած, զօրաց էին
անում, իսկ Գաղապարեան անկեղեցուցի առաջ
չարված էին փողաւոր արխանդուխտայի շքեղ
կառքերը, որոնց կառավարների փրկածութիւնը
և զէրութիւնը նրանց աղաների հաբստութեան
մասշտաբն է: Եւ ինչպիսի խորտա նմոյսներ.
Հայաստանի խնդ աւանակ իշուկ. այս ծաղ-
կաղարդն էլ քեզ համար աննկատելի անցաւ:
Տղիտութեան և համբերութեան այդ էմբլէմ դա-
նած կենդանուն Հայաստանի շատ տեղերում
այդ օրը լիչում են...

Եկեղեցու բակում խօսակցութիւնները այդ օր
սովորականից կենդանի էին: Ձեռքից ձեռք էր
անցնում «С. Петербургскія Вѣдомости» լրա-
գրի վերջին համարը, որ տպված էր մի քոչուած
կովկասի հայոց ծխական դպրոցների հարցի մա-
սին Այդ պահպանողական լրագրերը բաւական
ազդուութեամբ ուղում է ապացուցանել, որ կա-
րելի է մնալով աղգասէր և պահպանողական լի-

մոցները մտքին «Գործողայա կուսակ-
ցութեան» դէմ է և հայոց ինտելի-
գենցիայի անգամները կազմված փոք-
րիկ խումբը, որի մասին յիշեցինք վերեւ:
Եթէ չենք սխալվում, վրաց ինտելիգենցիան
էլ իր յատուկ ժողովներն է անում այդ
հարցի առիթով:

Մեզ համար շատ անխորժ է արձա-
նագրել այն փաստը, որ այդ նախապատ-
րաստական ժողովները, թէ այն կու-
սակցութիւնները, որ յիշեցինք, թէ այն, որ
դուց է մեզ անցյալ են, իրանց ամ-
բողջ գործունէութիւնը առաջ են տանում,
եթէ այսպէս կարելի է ասել, տնային
կերպով մասնաւոր եղանակով, նոյն իսկ
որոշ չափի զարտնասագութեամբ, մի երե-
ւոյթով, որ չէ ստույգ քաղաքային ինքնավա-
րութեան հրապարակական բնաւորութեան,
և բացի դրանից, անտեղի է, մանաւանդ
այն պատճառով, որ ազգաբնակչութեան
մէջ զանազան լուրեր են պատում ամեն
մի կուսակցութեան ձգտումների և թեկ-
նածուների մասին: Մեր խորին համոզ-
մամբ, քաղաքային ինքնաբնակչութեան
կուսակցութիւն, նախ քան թեկնածուների ցու-
ցակներ կազմելը, պէտք է հրապարակով,
— փառք Աստուծու լրագրիները շատ կան
Թիֆլիսում, — յայտարարել, թէ ինչ է
իր պրօգրամը, ինչ է նա ուզում քա-
ղաքի համար և ինչով է տարբերվում
միւս կուսակցութիւններից, որպէս զի
այդ ընտրութիւնները ծառայելին ոչ թէ
լոկ այս և այն անձի ընտրութեան,
կամ քաղաքագլխի թեկնածութեան, այլ
է միջոց տան ամեն մի ընտրողի լինել
ոչ թէ մի մեքենայ, որին բերում է քուէ
են դեղ տալիս, այլ կատարեալ քաղաքա-
ցի, որ զիտակցաբար միանում է այս և
այն կուսակցութեան, այս և այն խմբին:
Գաղանի կերպով, մանաւանդ աներում,
ծածուկ, փախտող կազմված ժողովները
և ցուցակները ոչ թէ որ և է օգուտ չեն
տալիս, այլ և չեն նպաստում քաղաքային
ընտրողական գործի զարգացման, ոչ թէ
չեն նպաստում ընտրողների զիտակցու-
թեան աճելուն, այլ ուղղակի ֆլաստում են
քաղաքի գործերին, երբ այդ ձևով ընտր-
ված ձայնաւորների ձեռքով քաղաքագլխի
և ուսկրավայի անդամների թիւունքի վրա
կարող են բազմել ոչ միայն անհամակրելի,
այլ ուղղակի անընդունակ մարդիկ, ինչպէս
այդ մի քանի անգամ փորձը ցոյց է տուել
արդէն...

Որտեղ կայ ապա քուէարկութիւն, և

նեւ նաև չիտակ և արդարադատ դէպի ալազգի-
ները: Ռուս աղատամիտ լրագրիներին, օրինակ,
«Русскія Вѣдомости»-ի չափազանց զգոյշ և թույլ
վերաբերմունքը դէպի ռուս օտարակները մի-
այն աւելի է երես տալիս անսանձ զրպարտիչ-
ներին: Այնպէս որ «С. Пет. Вѣдомости»-ի հա-
մարձակ և ազնիւ ձայնը այնքան նշանակութիւն
ունի, որ կարելի է ցանկալ այդ բանում աղա-
տամիտ լրագրիներին կողմից հետևողութիւն
Սակայն աւելի յաղիչ էր երևում խօսակցութիւն
մի այլ նիւթի: Ասում էին, որ Մոսկովայի թիւրքաց
հիւպատոսը, կարծես կապիտալիստ Պոսեկովին
է, պաշտօնական մի գրութեամբ, դիմել է այս-
տեղի առաջ քաշանայ զառաւմալ Տէր-Ղուկասեա-
նին, առաջարկելով նրան յայտնել Մոսկովայում
գտնվող հայերին զմեռաւտ սուլթանի ամենաու-
ղղումած այն ներման մասին, որին արժանա-
ցել են կոտորածից մաղապուրծ եղած թիւրքա-
հայերը: Նատերին անհաւատալի էր թւում, որ
քահանան ինքնապաշտի մի այնպիսի բան անի ե-
կեղեցում, բայց ազէտ քահանաներ ունենալու
առաւելութիւնները ջատագովողների համար նոր
սիրտպրիզ էր պատրաստում ձախտադիրը:
Առաջ քահանան, ինչպէս ծէսն էր, պատարա-

ընտրողական սկզբունք, այնտեղ պէտք է
լինի որոշ քաղաքական, և բոլոր ընտրող-
ներին մատչելի պրօգրամ, որից տարա-
բաղաբար դուրս են մեր քաղաքային ընա-
րողական բոլոր խմբերը: Այդ խմբերը մինչև
այժմ չը յայտարարեցին իրանց պրօգրամը,
թող զոնէ արանից յետոյ յայտարարեն, ա-
պա թէ ոչ ազգաբնակչութիւնը կատարեալ
իրաւունք ունի ասելու, որ պրօգրամներ
չը կան, այլ կայ միայն ցուցակ, որի
անցկացնելը ամեն մի խմբի միակ ցանկու-
թիւնը և նպատակն է:

ԿՐԵՏԻ ՊԼԵԽՍԻՏԸ

Մենք արդէն հաղորդեցինք, որ մեծ պետու-
թիւնները որոշել են կրեմլ կողմն ինքնավա-
րութիւն տալ. եւրօպական ծովապետները այդ
ժառով մի պրօկլամացիա են հրատարակել և
տարածել կղզու բնակիչների մէջ, մարտի
5/17-ին: Կրեմլ կղզու մի քանի թեմերը թե-
մական ժողովներ կազմելով պլեխիստի
միջոցով արդարեւ են կայացրել և յայտնել
ծովապետներին: Առաջ ենք բերում այստեղ եր-
կու թեմերի վեհուները, որոնք յանձնվել են ծո-
վապետներին մարտի 26-ին:

I. Սի դօնի թէ մի պլեխիստի տը
«Սիդօնի թեմի ժողովուրդը, գումարվելով այ-
սօր, մարտի 12/24-ին, հրաւիրելով ծովապետ-
ների մարտի 5-ի պրօկլամացիան լսելու, և

«Ի նկատի ունենալով, որ առաջարկված ինք-
նավարութիւնը միայն կրկնութիւն է այն սխալ
կացութեան, որ խայտառակում է քաղաքակրթ
աշխարհը»:

«Ի նկատի ունենալով, որ մեծ պետութեան
ներին երաշխաւորութիւնը ազգեցիկ չէ եղել ան-
ցեալում, որովհետեւ, թէև նրանց հիւպատոսները
գրաւոր երաշխաւորութիւն են տուել յունվար 21-ի
իրանց յայտարարութեան մէջ, թէ քաղաք-
ների քրիստոնեաների կայքը զբաւում է իրանց
պաշտպանութեան ապի, բայց երկու օր յետոյ,
մարտի 5-ի կայքերը մատուցեցին կրակի միացեալ
նաւատօրմների թնդանօթներին առաջ, առանց որ
մեծ պետութեանները ամենափոքր պաշտպանու-
թիւն ցոյց տալին քրիստոնեաներին»:

«Այդ պատճառն և ուրով մերժելով մի լու-
ծում, որ մեզ պէտք է առաջնորդի անխուսա-
փելի կերպով դէպի մի և նոյն դաշնաութիւն-
ները, որ մենք սահմանափակել ենք միակ մեր
պժեկով մենք յայտնում ենք որ, հաւատարիմ
մնալով այն երդման, որ տուել ենք մեր Աս-
տուծուն և մեր թաղաւոր Գէորգ I-ին, մենք
հաստատ և միաբան կը մնանք մինչև վերջին»:

«Թիւրքաց ընդհանուր հիւպատոսարանը Մոս-
կովայում, կարգադրութեամբ Ս. Պետերբուրգի
թիւրքաց զեպայանի, պատիւ ունի ինդրել ձեզ
հասցնել ի գիտութիւն Մոսկովայի չրջանում գե-
տնվող բոլոր հայերին, որ Թիւրքիայում վեր-
ջին խառնակութիւնների մէջ մասնակցի (?)
անձանց, հայոց ծաղումից, որոնք Թիւրքաց
կայսրութեան սահմաններից փախել են, նորերս
յնորհված է ներքու մնալ (?), իսկ այն անձինք,
որոնք դատաւարութեամբ էին մահվան պատժի
Թիւրքիա վերադառնալով ենթարկվելու են ժա-
մանակաւոր բանտարկութեան բանտային ամ-
բոցներում»:

Այս այն գրութիւնը, որը անգիտակցաբար իս-
րան թույլ տուեց քահանան՝ կարող եկեղեցում
Քահանայի ընթերցանութեան ժամանակ եկեղե-
ցում լսվեցին ձայներ. «բաւական է, չենք ու-
ղում լսել Սուլթանի ֆիրմաների մասին»: Բայց
քաջ քահանան իր բանը վերջացնելով հանդիստ
ծաւեց այդ պաշտօնական գրութիւնը և դրեց

անձը այն ազգի հետ, որի հետ կապված ենք ծագման, լեզուի, կրօնի և ընդհանուր զգացումների կապերով և կը մերժենք այն լուծը, որ ուժով կամենում են մեզ վրա դնել:

Արդենայի ընդհանուր—Առէժժ

Հաճի Միտայիս Եփեսոսի

II. Ապոկոփոսիս թեմի պաշտօնական

Ապոկոփոսիս թեմի ժողովուրդը, գումարվելով սիլլատրիս, 1897 թվ. մարտի 10-ին, Արմենիսում, կայացրեց հետևեալ որոշումը.

«Ի նկատի ունենալով ծովապետների կողմից կրեապիներին արած յայտարարութիւնը մարտի 5/17-ին, յայտնում է աշխարհին և մեծ պետութիւններին, որ ինքն հաստատ որոշել է ապահովացնել ամեն տեսակ զոհարեութիւններով կրեալի և Յունաստանի կառարեալ միացման դործը, նորին վեհապետութեան զօրք I-ի գալիսնի տակ:

«Նա կուզու է անում քաղաքակրթիւ ազգերին յայտնելով՝ որ այս պատերազմը կամ մեզ կը տանի զէպի միութիւն, կամ կը թաղի մեզ ամենքս մինչև վերջինը մեր հայրենիքի փլատակների տակ:»

3000 ստորագրութիւն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«Armenie», աշխատութիւն Եդմոն Նոգյէր (Edmond Noguères), Ժընև, 1897: Գիրք 3 1/2 ֆր.

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Ժընէ-վում նորերս լոյս տեսած Ֆրանսերէն այդ նոր գիրքը Հայաստանի մասին, որ կազմել է Եդմոն Նոգյէր Գրքի մանրամասն վերնագիրն է «Հայ աւստան պատմութիւն—կրօն—բարքեր—գրականութիւն—նեղակայ գրութիւնը»: Ֆրանսերէն այդ աշխատութիւնը զարգարված է Հայաստանի մի կարճատե քարտէշով և 16 պատկերներով: Բայի դրանից, գրքի առաջաբանը գրել է պրոֆէսոր Բարդ, որ համառօտութիւն է այն դասախօսութեան, որ պրոֆէսորը սեպտեմբերի 29-ին կարդացել է հրապարակական մի ժողովարանում: Ի նպատակ հայերի: Եդմոն Նոգյէրի այդ գիրքը համառօտ կերպով ճիշդ գաղափար է տալիս Հայաստանի հին պատմութեան, թիւրքաց Հայաստանի ներկայ դրութեան, կառարածների և հայերի այժմեան դրութեան մասին:

Հեղինակը խօսում է նոյնպէս հայոց թէ հին և թէ այժմեան գրականութեան մասին: Ուսաստանի հայերի գրականութեան մասին Նոգյէրի ասածներէն առաջը բերենք մի կտոր. «Ժամանակակից առաջին գրողը և ուսուցիչ հայերի նոր լեզու ստեղծողը խաչատուր Աբովեանն է (Երևանցի), գերմանական հին ուսանող: Նրա առաջին գործն» է «Վէճը Հայաստանի», որի մէջ նա նկարագրում է պարսիկների բարբարոսութիւնը ներկայ դարի սկզբներում և հայերի փորձերը՝ իրանց ազատութիւնը ձեռք բերելու համար: Աբովեանից յետոյ գալիս է Սեփիանոս Նաղարեան և նրա նշանաւոր աշխատակից Միքայէլ Նաղարեանը, եւրոպա-հայկական մաս-

մուլի երկու հիմնադիրները: Նրանք Մօսկվա յում հրատարակում էին մի ճշմարիտ առաջադիմական օրգան: Այդ երկու հրատարակչութիւնները ստեղծեցին հայերին բոլորովին անծանօթ մի ուղղութիւն: Այդ օրգանի մէջ տեղ գտան մի խումբ գրողներ, որոնք վերջը ժամանակակից շատ լաւ գրականագէտներ դարձան, ինչպէս Սմբատ Շահադեղ, Գամառ-Քաթիպա, Բաֆֆի և այլն: Այդ առաջադիմական ուղղութեան ղեկ ստեղծվեց մի ուրիշ օրգան, հայ պատմական գիտնական օրգանը—«Մեղու» Հայաստանի: Այդ օրգանի կարծիքով, ինչ որ ազգային էր, վատ թէ լաւ, պէտք էր անձեռնմխելի պահել: «Հիւսիս-ստիւայը» գաղաքացի մօտ 1862 թ.ին և մնաց միայն «Մեղուն»: 1872 թ.ին երեսն «Մշակը» մի բուն եւրօպայի մարդու՝ Գրիգոր Արծրունու խմբագրութեամբ, որը իր ուսումն առել էր Հայքընէրդ և Յիւրիւ: Նրա հրատարակչութեան տաղանդը շատ լաւ յայտնի է եւրօպական շատ գրողներին: Այդ երկու հակառակ բանակները շուրջը երևացին մի քանի ուրիշ օրգաններ, որոնք պատկանում էին այս կամ այն բանակին:

Գրքը պարունակում է մի քանի պատկերներ, ի միջի այլոց՝ հայ կիներ, հայ գիւղացիներ, հայ հայուկ, խմբիկներ, Գաղաթօն, Մուշի, Վանի և խարբերդի կառարածները պատկերները, Բաճրի և Ֆերիկ փաշա—չարագործների պատկերները և այլն:

ՆԱՄԱԿ ԱՐԳԱՆՈՒԶԻՑ

Ապրիլի 15-ին

Արդանուշում մինչև հիմա դեռ չէ բացված պատմային բաժինը, չը նայելով որ այդ տարիքով մի քանի անգամ գիմուներ են եղել Տեղական ոստիկանական վարչութիւնը չարքով մի անգամ ընդունում է հասարակ նամակներ և միլիցիոներներին ձեռքով ուղարկում է Արդունի պատը: Իսկ թէ ինչպէս են վերաբերվում անգական կառավարութեան ծառայողները և պատը տանող միլիցիոներները այս գործին, այդ շատ լաւ կարելի է իմանալ հետեւեալ փաստերից: Տեղական ծառայողներից մէկը՝ իր անձնական հայեցողութեան համեմատ՝ ուղարկում է կամ չէ ուղարկում իրան յանձնված նամակները: Բայց որ անելի հետաքրքրական է, Արդունի պատումն էլ, հաւանականաբար միլիցիայի ուսուցիչները, վերաբարձում են այն նամակները, որոնց վրայից այս կամ այն կերպով մարկանները պոկված են լինում: Այդպիսի մի նամակի վրա են անձամբ կարդացել եմ ծառայողի հետեւեալ սրամտ մակագրութիւնը. «ПРИЖИТЕСЬ ДВА МАРКИ И ПРИЖИТЕСЬ». Իսկ այն նամակները, որոնց տէրերը յայտնի չեն լինում, ուղղակի պատուվում են: Անցեալները այստեղի քանանայի մի նամակի վրայից մարկանները՝ կամ այստեղ կամ Արդունի պատում պոկելուց յետոյ, նամակը պատուել էին և պատում նամակի կտորները պատահամբ մի ծա-

պարաստ կը լինին:

Նոյն ժողովում հարց բարձրացաւ գաղափար քանանայի և ժամանակակից պահանջներին անհամապատասխան սարկաւազին նշանակել կենսաթոշակ և հրամարեցնել պաշտօնից, պէտք է դիմել ուր հարկն է և աշխատել լուծել այդ խնդիրը: Հայի յետիւ խնդրն է գովելի: Սակայն ցանկալի է, որ այդ հարցի տարական լուծումից յետոյ մեր հասարակութիւնը լուրջ վերաբերվէր զէպի նոր աւագ-քանանայի ընտրութիւնը, մանաւանդ որ ընտրաբանը, վառելով, 900 ռ. ուճիկը, կրօնի դասերը զանազան ուսումնարաններում և քանանայագործութիւնը ոտնդնում են 6—7 հազար ռուբլու եկամուտ. ուրեմն կարող են և բարձր կրթութիւն ստացած քանանայի գտնվել...

Բայց, ցանկութեան հակառակ, տէրտէրներով շատ զբաղվեցի, ուստի պատմում այժմ ընթերցողներին այլ իսկ մասին: Նոյն ծխականների ժողովում յարգելի Գ. Ջանչեան, մասնաւոր կերպով, ժողովի պարասմունքներից դուրս, դիմեց ներկայ եղողներին, յայտնելով, որ իր նախաձեռնութեամբ կազմվող ռուսերէն «Ժողովածուն», որի վաճառումից դոյնալիք գումարը թիւրքահայերի օգտին է, արդէն տպվում է:

Նոյն մարդ գտնվում՝ ուղարկել էր նամակատիրոջ—Նոյնպիսի անկարգութիւններ պատահում են և թիֆլիսից ստացված լրագիրների հետ:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԻՍԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 11-ին

Անցեալները «Մշակին» մէջ տպվեց մի թղթակցութիւն Բագուից, որով նամակագիր Ա. Արեւելանցի դատարարութեան էր Բագուի հասարակութեան տարօրինակ վարմունքը զէպի մայրենի բեմը և առհասարակ նրա անտարբերութիւնը զէպի Հայաստանից փախած մեկի ու քաղցած գողթականները: Իսկ այս օրերս, «Մշակին» 42 համարում տպված մի ուրիշ թղթակցութեան մէջ, թղթակիցը՝ Ն. Գաւթեան՝ բոլորովին հակառակ կարծիք է յայտնում: Նրա կարծիքով, եթէ հայոց հասարակութիւնը Բագուի հայոց ներկայացուցիչներին չէր յաճախում, մեղաւորը հասարակութիւնը չէ, և իբրեւ ապացոյց, յիշված է այն փաստը, որ օպերային ներկայացուցիչներին թատրոնը միշտ լի էր լինում: Համեմատելով այդ երկու թղթակցութիւնները, թոյլ եմ տալիս ինձ «Մշակին» միջոցով հրապարակել, արտայայտել իմ ապաւորութիւնը:

Ընթերցող հասարակութիւնը, եթէ ծանօթ չէ Բագուի հայոց ինտելիգենտ հասարակութեան հետ, հարկաւ իրաւունք ունի ասելու, որ բազուցիները շատ մեծ բարեգործութիւններ են անում, քանի որ 15 օրվայ մէջ 300 հազար ռուբլի փող հաւաքեցին թեմական դպրոց բանալու համար (թէ և թղթի վրա) և այս կամ այն եկեղեցին նորոգելու կամ բարեգործական հիմնարկութիւնների համար հազարներ նուիրեցին, կամ այս ինչ բազուցին վախճանվեց և նրա բարեկամները նուիրատուութիւններ արեցին և այլն... Տարբերազարդար, այդ բոլորը փառասիրական ձեռնարկների վրա է հիմնված: Այս թէ ոչ ինչ անուան տանք այն բանին, որ թշուառ հայ գաղթականներին, սրից փախած, իրանց դաւաններից, ամենուրեք, եղբորից, քրոջից, մինչև անգամ մի կտոր չոր և ցամաք հայից զրկված թշուառներին, որոնց վիճակը անհասկնալի է արեւմտեղ իւրօրային, բազուցիները օգնութեան հասնելու փոխարէն՝ նրանցից երես են դարձնում, նրանց օգտին տրվող ներկայացման չեն գնում: Հատկապէս է, որովհետեւ ոչ ոք չէ տեսնելու և նրանց ազգանունները հրապարակով խոչոր տառերով չէ տպվում լրագիրների մէջ: Փետրվար ամսին հայ զերաստանական խմբի անդամները Բագու, գաղթականների օգտին, մի ներկայացում են տալիս և, ինչպէս յիշված է «Մշակին» թղթակցութեան մէջ, արդենք է գոյանում միմիայն 15 ռուբլի: Իսկ մի երգչուհու համար, ինչպէս ցույց է տալիս միւս թղթականիցը, մի քանի ռուբլում 5—6 հազարներ են հաւաքում, թանկագին ընծաներ են տալիս և աղաղակներ զոյլները ու կեցցեղների ձայներ երկնք են լնդացնում... Եթէ այդ չէ առաջանում չուսուցիչներից, այլ այն բանից, որ նրանց վրա ազդում է երաժշտութիւնը, ինչի չէ

ազդում նոյն մարդկանց վրա թշուառների աղաղակների ձայնը և նրանց դառն վիճակը: Ո՞րն է անելի ազդու և վեհ. 5—6 հազար տալ անհային ամբոխին կերակրելու համար, թէ զցել մի դերասանուհու առաջ, որն առանց այն էլ տառնակ հազարներ է հաւաքում տարվայ մէջ:

Լաւ ծանօթ լինելով Բագուի հասարակութեան, կասեմ. — եթէ, յիշուի, կան Բագուում օպերային յաճախորդներ, որոնք գնահատում են գեղարուեստը, կան նաեւ շատ գրամատէրեր, որոնց ընտանիքները ոչ թէ օպերայի մասին զազախար չունեն, այլ գուցէ մի երկու անգամ են տեսել թատրոնի երեսը: Գտնէ զրանց լայնել է հայոց թատրոնը, մանաւանդ երբ ներկայացումը բարեգործական նպատակով է տրվում: Այդպիսիները օպերա են գնում ոչ թէ նրա համար, որ պահանջ ունեն, այլ որովհետեւ պահանջ ունեցողները գնում են: Օպերա յաճախելով, թող չը մոռանան նրանք, որ եթէ օտար ազգերը պարտական են ձեռք մեկնել տառապեալ գաղթականներին, ապա հազար անգամ անելի ևս մենք հայերս եմք պարտական, ուրեմն և բազուցիները:

Ն. Արքանաւանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՌԵՐ

Յայտնի պետական գործիչ Նուբար փաշայի սրդին՝ Պօլոս Նուբար, ինչպէս հազորդում են Լօնդոնի լրագիրները, զիմել է անգլիական ներկայացուցիչ Կրօմերին՝ նիւթական նպաստ խնդրելով Եփեսոսում ապաստանած հայ գաղթականների օգտին, որոնց թիւը հասնում է 2000-ի:

Օղէսայի լրագիրները հազորդում են, որ Քիչի-նէլի յայները հաւաքել են 65 հազար ֆրանկ և ուղարկել այդ գումարը յունաց թագուհու: Իսկ խարկովից Եփեսոսում են գնացել 40 յոյն և հայ կառուարներ, որոնք այդտեղ պարապվում էին արդիւնագործութեամբ: Խաբովում հանգանակութեամբ հաւաքվել է յունական գործի համար 10 հազար ռուբլի:

Այս օրերս, երկրագործութեան միւլիտարութեան հրատարակութեամբ, լոյս տեսաւ Մուղանի անապատի մասին մի գիւղատեսակական և բնապատմական հետազոտութիւն, որ կրում է «Муганская степь» անունը: Հետազոտութեան հեղինակն է աղբօնով Մէլիք-Արզուման, որ ուղարկված էր անցեալ տարի Մուղան, իբրեւ անգամ այն գիտնական արշաւախմբի, որ նպատակ ունէր ուսումնասիրել Մուղանի ջրերը, քննել հեղեղների տարածվելու ուղիները և ժողովել նիւթեր հեղեղների ղեկ մարտակուս միջոցներ մշակելու համար: Հետազոտութեան կցված են մի քանի նկարներ և աշխարհագրական քարտէզ:

Ուսուցիչ գրամատիական խումբը, ապրիլի 20-ին, ներկայացրեց յայտնի գրամատուրգ Զուգերմանի «Սողոմոն կործանում» անունով դրաման: Որքան յիշում ենք, այդ դրաման առաջին

քանի փողաւորներ կը վճարեն այն՝ իրանց համար չնչին գումարը (հաշուելով 3.000 օր., հատը 4 ռուբլի) 12.000 ռուբլի, որը յետ կը ստանալին գրքերի վաճառումից, բայց...

ստորագրութեամբ հաւաքվեց մօտ 600 ռուբլի: «Ժողովածուի» տպված մի քանի թերթերի հետ ձեռքից ձեռք էր անցնում և մի լուսանկար. տանջանքի ու կոտորածի մի կաթիլ էր դա. քստմեղի իրականութեան մի ամենախորը անկիւն էր պատկերացնում մեր առաջ, լուսանկարչական ճշգրտութեամբ Յուրտ ձմեռ է. անգութ երկրից ձիւն է թափվում. մի տան պատերի տակ բոքիկ կանգնած են «բարեկենդան» կառավարութեան երեք անմեղ զոհեր՝ մայրը իր երկու փոքրիկներով: Յիցատները հազիւ են ծածկում մահմէտական ֆանատիկոսութեան գոհերը բազմաշարքար մարմինը: Բարիկ, գլխաւոր փոքրիկները ձեռքերը սեղմել են կուրծքներին և երկիւղ արտայայտող զէմբերով կցած են իրանց դժբաղդ մօր փեշերից ու նայում են... Այդ հայեացքները քարեր կը ճաքեցնեն և վաղ-րի աչքերից անգամ արտատու կը քամեն:

Լ.

անդամն է խաղաղութան Թիֆլիսում: Տաղանդաւոր գրողը, որի մի քանի պիէսները, ինչպէս «Պատիւ» և «Հայրենի օջախ» ծանօթ են հայոց հասարակութեան, իր այս դրամայի մէջ զուրբ է բերում երկու շատ հետաքրքրական տիպեր՝ մէկը՝ Նկարիչ Վիլհելմ Եանկով, «Սոցիալիստական» նկարի ստեղծագործողը, միւսը՝ Թիֆլիսի Ազգա Բարձրագիւղական, երկուսն էլ հարազատ ծնունդ «բարձր» կոչված ազգականված հասարակութեան: Տարաբաղաբար դրաման, որ առանց այն էլ շատ բարդ հիւստածք ունի, մի փոքր ձանձրոյթ է պատճառում, գլխաւորապէս այն պատճառով, որ գործողութեան տեղ նա ձգձգված է անվերջ խօսակցութիւններով, և հեղինակը՝ կամենալով ճիշդ նկարել կեանքը, յաճախ չնշում է գործողութեան գլխաւոր թելից: Այդ պիէսը տեսնելու համար թատրոն էր հաւաքել անազն բազմութիւն:

«Одесский Листок» լրագիրը հաղորդում է, որ ուստաց «Ջիւսալէ» չորհրդակցական օրերս Սոցիալական մի քանի հայ ընտանիքներ, թուով 14 հոգի: Լրագիրը ասում է. «Գրանք ամենքն էլ հարուստ են, կանանց և փոքրիկ աղջիկները ազնաւորներում վաղուց էին հազդին աղամանդներ, նրանց մասները լի էին թանկագին մասանիւններով»:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԻ ԹԻՓԻՍԻ ԳԻՒԼԻ հայոց դեպքերի վարչութիւնը խնդրում է մեզ ապել հետեւեալը. «Թիփոսի գիւլի ուսումնարանի վարչութիւնը յայտնում է իր հորհակալութիւնը պ. պ. Լեւոնի Զոհրաբեանին և Յարութիւն Խոջիբեանին, որոնք նոյնից 25 րոպէ՝ դպրոցի աղբաւ աշակերտների համար դպրոցական շրջեր գնելու նպատակով»:

ԲԱՂՈՒՅԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 15-ին, դերասան Վրոյր, Թադէվի թատրոնում, մասնակցութեամբ դերասանական խմբի անդամների և թատերասէրների, ներկայացրեց «Գոն Գրիգորի» կոմիքիան: Չը նայած որ դերասաններից մի քանիք, ինչպէս պ. պ. Վրոյր և Աւետեան, գեղեցիկ էին խաղում, այնուամենայնիւ, ներկայացումը ընդհանրապէս վատ անցաւ չորսիւն մի երկու թատերասէրների անհոգի խաղի: Թէև յայտարարված էր, թէ ներկայացումը կը սկսվի ժամը 8 1/2-ին, սակայն հասարակութիւնը մի ամբողջ ժամ ուշացեց, մինչև որ ժամը 9 1/2-ին վարձատրվեց քարձրացաւ: Անտրակտներում անում էր մի սաղանդար և երգում էր մի թուրք երգիչ: Ուղիղն ասած, նրանք ոչ թէ անում ու երգում էին, այլ իրանց գոռոռում և ձայնով հասարակութեան ականջներն էին խլացնում: Մի և նոյն ժամանակ բնավ լավում էին հարա-հորդներ: Մի խօսքով թատրոնում կատարեալ խոսք էր տիրում: Չարմախի է. և զեն մեր դերասանները զանգաւորում են, թէ հայոց հասարակութիւնը թատրոն չէ յաճախում: Մենք համոզված ենք, որ եթէ մի դերասանները այդպէս շարունակելու լինեն՝ շատ չի տևի և հասարակութիւնը վերջնականապէս կը դադարէ հայոց թատրոն յաճախելուց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՆԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Standard» լրագիրն հեռագրում են Հոմից. «Պատը այլ ևս ոչ մի վտանգութիւն չունենալով առկա լինելով, իր իրաւասութեան ենթարկվող արեւելեան եկեղեցիները պիտի քնէ Արքիեպիսկոպոսի և Աստրիայի պաշտպանութեան տակ: Կ. Պոլսի առաքելական նուիրակութիւնը պիտի փոխվի կամ չափաւորվի, որովհետև վատիկանի համար կարելի չէ, սրանից յետոյ, դիւրամատիական յարաբերութիւններ պահպանել թիւրքերի հետ: Մոմսինքս Բոնէտտի, առաքելական նուիրակը, մի քանի ժամանակից ի վեր կարել էր յարաբերութիւնները թիւրք կառավարութեան հետ, բայց նա դեռ մնում է այնտեղ, որովհետև պետութիւնները պաշտպանում են նրան»:

Վալիսիւստից գրում են, որ Միացեալ-Նահանգներն ուր նախագահ Մակ-Կլինկը հաստատ որոշել է զոհացում պահանջել Թիւրքիայից այն վեհաների համար, որ ամերիկական բազարացի-

ները և միսիոնարները կրել են փոքր-Ասիայում տեղի ունեցած թիւրքական զաւթնութիւնների երեսից: Մակ-Կլինկի ծրագիրը հետեւեալն է. ուղարկել Կ. Պոլսի յայտնի իրաւաբան և դիւլոմատ Ջ. Ֆոստէրին, իբրև յատուկ գործակալ, Միացեալ-Նահանգների լիազօր դեսպանի կաշտով այն նպատակով, որ նա ձեռք բերի Բ. Գոնից վարձատրութիւն այն ամերիկական բազարացիների և միսիոնարների համար, որոնք վեհաներ են կրել 1895 թ. ին, երբ թարքերի միսիոնարների տունը այրվեց. մի և նոյն ժամանակ նա պէտք է ստիպի թիւրքաց կառավարութեան անմիջապէս ձեռնարկել այն ամերիկական բազարացիների (ըստ մեծի մասին հայերի) գործիքնութեան, որոնց զէմ թիւրքաց իշխանութիւնները հաւանք են յարուցել:

«Новое Время» լրագիրն գրում են Կ. Պոլսից, մարտի 31-ից. «Կ. Պոլսում ապրում են մօտ 75,000 օսմարահայաւաններ, որոնք շատ վատ դրութեան մէջ են: Եւ ճշմարիտ, քաղաքում մի մարդ չը կայ, որ երկուց չը կրի ապագայ հայկական և յունական խառնակութիւններին: Մի ժամանակ թուում էր, որ այստեղ մոռացել են հայերին, բայց այն օրից, երբ հայոց պարտքը սովորական յայտագիր ներկայացրեց թէ հայերին խոստացված ներուսն ամենին չէ իրագործվել և մի և նոյն ժամանակ խնդրեց, որ Բ. Գոնը ընդունի իր հրաժարականը, քանի որ ինքն անկարող է կատարել իր պարտաւորութիւնները, — ամենքը միաժամանակ յաղթեցին և հաւատացին, որ պարտիւրքին յետադիւրական կօմիտան է դրել այդ քաղաքի անեղութեանը գրել է նրան, որ ինքը կը համբերի մինչև մարտի 15-ը, որից յետոյ նա իրան ազատ կը համարի խիստ միջոցների դիմելու: Պարտիւրքը այդ բոլորի մասին հաղորդեց կառավարութեան և վերջինս այն օրից սկսեց կառնաւորել հայերին, խուզարկութիւններ անել աներում և կրկնապատկել զիչեքային պահապանների թիւը»:

Վիեննայից հեռագրում են ապրիլի 14-ից, որ սովորական ջառանգի տօնի ժամին, ուղարկել է յունաց և հայոց պարտիւրքներին փող աղբատներին բաժանելու համար: Որպիսի բարեւորութիւն:

ՊԱՏԵՐԱՋՄԻ ԴԱՇՏԻՅ

(Հեռագրներ մայրաքաղաք Երազնիցից)

Վիեննա, 14 ապրիլի: Կախը Մատիւն սկսվեց ուղարկել առաւօտեան և շաբաթակից մինչև կէսօր: Յոյները պաշտպանվում էին հետաքրքր և տեղի տուն միայն թշնամու գերակիւ ոյթի առաջ: Գահաժառանգը շատ աչքի էր ընկնում իր ընտանիքում: Յոյների կորուստը անշնչում է Շարաթի առաւօտեան զահաժառանգը հեռագրեց թագաւորին. «Նախնջում ենք կարգով — և խնդրեց հրահանգ: Թագաւորը պատասխանեց. «Թողնե՛ք Լարիսան, եթէ պաշտպանութիւնը անհաւրին է»: Գրանից յետոյ յայտնեց նահանջեցին երեք խմբերով: Շարաթի օր, կէսօրին, Լարիսան մաքրված էր: Ամենավերջինը հեռացան նահանգապետ և հեռագրական պաշտօնեան: Թողնված կրուպով չորս խնդանութիւններ վեհավում են. երկաթուղային և հեռագրական գծերը Լարիսայի և Ֆարապի մէջ ջանքով են: Լարիսայի ազգաբնակչութիւնը քիչաց Կ. Պոլսի, որտեղից կանաչ և երկնաւերը տարվելու են Աթէնք: Լարիսայից հահանջեց նախառնակված էր գլխաւոր շտաբի ծրագրով: Ֆարապում կենտրոնացած են Դիմապոլի, Մատրապոսի, Մակրո Միխայիլի և Սոփիսիլի բրիգադները, թուով 40,000 հոգի: Դրեքերը այնպէս են ամրացնում, որ անմատչելի լինեն»:

Վիեննա, 14 ապրիլի: «Neue Freie Presse» լրագիրն հաղորդում են Կ. Պոլսից. «Տարաւոյում թիւրքերը աների իրեղնները և խառնութիւնների ապրանքները անձեռնմխելու գտան: Քաղաքում մնացել են միայն չորս ընտանիք: Լեզնէմ վաչան, աւարառութիւնների առաջն առնելու համար (?) պահպաններ է դրել մազադիւններում և եկեղեցիներում: Յոյն զբոյնները ուղարկվում են խմբերով Լիւսոն, ուր գտնվում է Օսման վաչայի բնակարանը»:

Լոնդոն, 15 ապրիլի: «Times» լրագիրն հաղորդում են Աթէնքից, որ չը նայելով Լալիսոյից

և կամ նպատաւոր լուրերին, անկողնում է, որ պատառնաւորութեան շրջաններում գրութիւնը վերին տախտակի կրիտիկական է համարվում: Լալիսոյում ունեցած անաջողութիւնների պատճառով, որովհետ է թիւրքաց գործող գործին աւելացնել 80,000 զինուոր: Ապրիլի 13-ին, Բոգոսոս կղզին ուղարկելու համար, նաւերի վրա բարձեցին 700 արկղ հրացաններ և 8,000 արկղ փամփուշտներ: Լալիսոյում յոյների ունեցած աջողութեան լուրը ճիշդ տպաւորութիւն գործեց Լալիսոյի վրա: Գրքան վրա: Գործող գործին անաջողութիւնները, ինչպէս և նրա զանազալ շարժման պատճառները, քննելիս, յայտնվեց, որ նրանք առաջնաւոր են այն հանգամանքից, որ պատերազմական գլխաւոր գործողութիւնների ղեկավարութիւնը բոլորում է Լալիսոյի վրա: Թիւրքաց ծովային միսիոնարութիւնը եռանդուն միջոցներ է ձեռք առնում Չալիսիան, որիչ նաւահանգիստները և կղզիները պաշտպանելու համար: Սալոնիկում, յունաց ուղարկութեան պատճառով, յուզմունք է տիրում: Բացի աւստրիական զորահաւոր նաւերից, այդտեղ ուղարկված են և միւս պետութիւնների պատերազմական նաւերը:

Կ. Պոլսի, 15 ապրիլի: Ոսկիւղիւնում կանգնած նաւատորմի մի մասը հրաման ստացաւ Կանդիա գնալ: Եանիսայից ստացված հիւպատոսական ղեկուցումների պատճառով, զեպանները առաջադրութիւններ արին Բ. Գոնի հիւպատոսարանների պահպանութեան և ազգաբնակչութեան խաղաղացման համար միջոցներ ձեռք առնել:

Կ. Պոլսի, 15 ապրիլի: Դեսպանները յանձնեցին Բ. Գոնի մի յիշատակագիր յոյն հպատակների արտաքին առիթով: Յիշատակագիրը ցոյց է տալիս, որ եթէ յոյները միանգամայն արտաքին, առեւտրական յարաբերութիւնները մեծ վնաս կը կրեն, այդ պատճառով, անհրաժեշտ է արտաքին յետաձգել: Դեսպանները յայտնում են մի և նոյն ժամանակ, որ զեպանահանգիստներում, հիւպատոսարաններում և հոգևոր հաստատութիւններում մէջ ծառայող յոյները կը մնան զեպանահանգիստի պաշտպանութեան տակ:

Աթէնք, 12 ապրիլի: Հեղինակներն թիւրքերից օր այնքան շատանում է, որ յունաց թագաւորը ստիպվեց արքայական հրովարտակով հեղինակներին ֆալանգ անուսով մի զօրախումբ կազմել: Հեղինակներն հազուադէպ կանգնեցին է, յոյն ձիաւոր զօրքի ձիի նման, կողքից կանգնած է սուրին, կոշիկները սպիտակ: Այդտեղ կան անգլիացիներ, ֆրանսիացիներ, գերմանացիներ, աւստրիացիներ, լեհներ, իտալացիներ, բուլղարներ, սերբեր, ռումիններ, չեքո-սլոուակներ և հայեր: Ամենից շատ ընտրել են անգլիացիները, — նրանք անաւարելի լինում են վերաբերվում իրանց բոլոր շրջապատողներին: Ֆրանսիացիները առանձին են վարժվում. գերմանացիները, աւստրիացիները և լեհները առանձին խումբ են կազմում: Ամենից կանգնելու և առողջ իտալացիների խումբն է: Բուլղարները, ռումինները, սերբերը, չեքոսլոուակները և հայերը — թիւրքական լուծի տակ տանվածները և տանջվողները — առանձին, անկախ խումբ են կազմում և նրանց ղեկավարութիւնը յանձնված է մի բոլոր օֆիցերի, որ խօսում և հրամաններ է արձակում ուսերէն:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՈՒՄԱՆԻՅ

Թաւրիզ, ապրիլի 8-ին

Թաւրիզի խոռովութիւնները վերջապէս հանգարտվեցին: Խնչպէս անցեալ տարեկան հաղորդել էի ուստաց հիւպատոս Պետրով մի պաշտպանութեանը էր ուղարկել թագաժառանգին, իսկ թագաժառանգը ստանալով այդ թուղթը՝ յայտնեց, որ հիւպատոսարանին, որ սպասի մինչև նոր հահանգապետ Ամիր-Նիզամի գալը, օրից յետոյ այս վերջինս ինքը կը պատասխանէ այդ թղթին: Մինչև Ամիր-Նիզամի գալը՝ թագաժառանգը պարսիկներին վախեցնելու դիտաւորութեամբ, այդ մի և նոյն թուղթը ուղարկում է մի շաւիղին, որպէս զի նա կարգաւ ժողովրդի առաջ և յետոյ ինքն ու սելիկների գլխաւորները ստորագրեն և ուղարկեն հիւպատոսին: Սակայն թէ մուշտիկը և թէ սելիկները հրաժարվում են այդ թուղթը ստորագրելուց, ուստի այդպէս էլ մնում է մինչև Ամիր-Նիզամի գալը:

Ապրիլի 5-ին, շաւաթ առաւօտեան ժամը 8 1/2-ին, նահանգապետ Ամիր-Նիզամը հասաւ քաղաք: Հայերից ոչ մէկը «Բիշվաղ» (ընդամաք) չէր գնացել, միմիայն հազարաւորները և մի երկու պատաւոր անձինք հաւաքված Ամիր-Նիզամի հանապարհի վրա, մի հայի տան առջև զինուորեցին նրան: Նահանգապետը հասնելով հայերի կանգնած տեղը՝ հրամայեց կառքը կանգնեցնել, ապա ինքը բազարավարութեամբ բարեկամ բոլոր հայերին, հարցրեց նրանց առողջութիւնը: Ապա զստնալով թաջիր բաշուն (ուստահպատակ հայերի վաճառականապետին) կատակով ասաց. «Մեղաւորը դու ես, զիչեքային 2 ժամ մնացած՝ արի մեզ մօտ»: Բայց հայահանգից մէկը իր հօտի կողմից մի խնդրադիր տուեց նրան: Կառքը մեկնեց և Վալի-բոսը կոչվող շուկայից անցնելու ժամանակ մի սելիկ առաջ անցնելով տուեց Ամիր-Նիզամին մի թուղթ. Ամիր-Նիզամը անմիջապէս հրամայեց կառնաւորել այդ սելիկին, որը և մի անգամ թաւրթում կատարվեց: Խնչպէս ասում են, այդ սելիկի տուած թուղթը իբր թէ բողբոջակ է եղել հայերի դէմ, ուստաց զրօշակի տակ ապստամբելու համար:

Նոյն օրը երկեղեցիան՝ ինչպէս Ամիր-Նիզամը պահանջել էր՝ թաջիր-բաշուն գնում է նրա մօտ: Ամիր-Նիզամը նրանից տեղեկանալով եղելութիւնը սկզբից մինչև վերջ, խնդրում է, որ զեպան և խնդրէ հիւպատոսին, որպէս զի հայերին արձակէ, սակայն թաջիր-բաշուն հրաժարվում է զբաղից ասելով, որ պէտք է այդ մասին Ամիր-Նիզամը ինքը խօսէ պ. Պետրովի հետ:

Հայերը լսած լինելով իրանց զերեզմանատան քարտեզող լինելը թուրքերի ձեռքով, ապրիլի 6-ին, կիրակի օրը, առաւօտեան, մի նոր ննջեցեայի թաղման առիթով, մօտ 500 հոգի զիմում են դէպի հանգստարանը, տեսնում են նախ դարպասի մի մասը հանած տարած, մրտնշելով ներս նրանց աչքերի առաջ պատկերահում է մի կատարեալ աւերակ, զերեզմանատան անազն շինութեան բոլոր զանքերը, լուսամուտները, ներսի նստարանները և սեղանները տարած, քիչ էլ առաջ գնալով տեսնում են մի քանի զերեզմանները ջանդված, զերեզմանաքարերի մարմարները բոլորովին ջարդված և մի քանի դիակներ էլ գետնի երեսին անձինք տակ ընկած: Որքան վայրագութիւն, որքան բարբառութիւն, մեռեալներին անգամ չէին թողնում... Հայերը կատարում են և խմբովին գոռում զիչեքային վերադառնում լցվում են հիւպատոսարանը և եղելութիւնը յայտնում պ. Պետրովին, որը պատասխանում է՝ թէ սպասեցեք, երբեկոյնան Ամիր-Նիզամին այցելութեան գնալիս այդ մասին էլ կը խօսեմ և բաւարարութիւն կը պահանջեմ:

Նոյն օրը, կէսօրից 1/2 ժամ անցած, ի թիւս միւս հիւպատոսների՝ պ. Պետրովը էլ այցելութեան գնաց Ամիր-Նիզամին: Երկուսը երկու ժամից անելի խօսում են խոռովութիւնների վրա. Ամիր-Նիզամը վերջում խնդրում է պ. Պետրովին, որ հայերին արձակէ, խոստանալով յաջորդ օրը մի ապահովացման թուղթ ուղարկել հիւպատոսարանին, իսկ պ. Պետրովը խոստանում է թուղթ ստանալուն պէս՝ հայերին պատասխանել և արձակել: Բացի թղթից Ամիր-Նիզամը խոստացաւ յաջորդ օրը ջառ կանչել ապա զազարարել մոսկուսիկի բերանով, որպէս զի մահմեդականներն իմանան, որ չարագործները սիտի պատվին, և եթէ այսուհետեւ մէկն ու մէկը հայացել կամ ծեծել որ է մի հայի, հայ-հոյողի լեզուն կը կտրվի, ծեծողի՝ ձեռքը:

Երէկ, ապրիլի 7-ին, կառավարութեան պետականը ազգաբարձր էր վերելիս: Կարգաւորութիւնը մեծ երկիւղով, որ մի գուցէ պարսիկները իրան էլ ծեծեն ու ջարդեն, սակայն չորսիւն նրա հետ չըջող երկու ֆերաշներ, ոչինչ չը պատահեց: Նոյն օրը Ամիր-Նիզամի կարգած ճարտարապետ — արմաղիքը և հիւպատոսարանի կողմից նշանակված մարդիկ, հայ թաջիր-բաշուն ուղեկցութեամբ՝ գնացին զերեզմանատուն և բոլոր վնասը գնահատեցին:

Երէկ երեկոյնան պ. Պետրով ստանալով հայերի ապահովութեան թուղթը պարսից կառավարութիւնից, այսօր ստացաւ յայտնեց հայերին՝ թէ խնդիրը վերջացած է և բոլոր հայերը ապահովված են պատմաւորթի զօրութեամբ: Եստի կարող են ցրվել իրանց աները և աղտա

գնալ իրանց գործերն: Հայերի վերաբերու-
թեամբ այսուհետև որ և է դեպք պատահելու
ուսուցիչ հիւսուցողները երաշխաւոր է: Կո-
ղոված հայերը կը ստանան իրանց արարքի
վճարը պարտից կառավարութիւնից, իսկ քանդ-
ված տներն ու հանգստարանը կը վերանորոգ-
վեն կառավարութեան հաշուով:

Այլ ևս վատահ լինելով իրանց ապահովու-
թեան վրա, հայերը քիչ-քիչ սկսեցին ցրվել:
Ընդհանուր փնտրեց անփութութիւնի է, որովհետեւ
այս 20 օրվայ անգործութենէն ինչն էլ բարդվե-
լով ուրիշ դժբաղդութիւններ վրա՝ չառնելին
գրեցի վերջին պատառ. հացից: Ամեն կողմից
այսօր անէծքներ են, որ թափում են սրա պատ-
ճառ եղողի գլխին:

Արշակունի

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԵՐԱՅԻՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

ԱՌԷՆԻ, 18 ապրիլի: Պատգամաւորների ժողո-
վում հաւաքվեցին 40 պատգամաւորներ: Շատ
ցոյց անողներ չընդունեցին փողոցներում լուրում
են: Կեցեց ծովապետ Կանարիս: Բացակայու-
թիւնները: Ոչինչ աչքի չընկող զէպեր թէ պատ-
գամաւորների ժողովում և թէ նրանից զուրս
տեղի չունեցան: Երեկոյան 8 ժամին Բալլի
յոյս ունէր ներկայացնել թաղաւորին մինիս-
տրների վերջնական ցուցակը:

ԱՌԷՆԻ, 18 ապրիլի: Թիւրքացի զօրքը երէկ
սկսեց իր յարձակումները յաւական գիւղերի
վրա ֆարսալի մօտ:

ԱՌԷՆԻ, 19 ապրիլի: Նոր մինիստրութիւնը
կազմակերպված է Բալլի—մինիստր-նախագահ և
ծովային մինիստր, Տէօտօկիս—նրբերն գործերի մի-
նիստր, Սկուրուդիս—արտաքին գործերի մի-
նիստր, Լեւոնտիս—ժողովրդական լուստարու-
թեան մինիստր, Տրիստաֆիլիս—արդարա-
դատութեան մինիստր, Վիլյուպիս—ֆինանսե-
րի մինիստր, գնդապետ Գամբուս—գլխավորական
մինիստր: Մինիստրները երբեմն կը ստան:

ԼՕՆԴՈՆ, 19 ապրիլի: «Standard» Սթէնդըից
տեղեկութիւն տալով, որ թիւրքացի զօրքը սկսեց
յարձակում գործել յաւական գիւղերի վրա ֆար-
սալի մօտ:

ԲԵՐԼԻՆ, 19 ապրիլի: Կայսրուհի Աւգուստա
կրէյսերը կրետական ջրերից ուղևորվեց զէպի
ֆալէս:

ՎԻԵՆՆԱ, 19 ապրիլի: «Corr. Bureau» լրագ-
րին Պետերբուրգից հաղորդում են. «Կոստա Մու-
րափէլ և Գուրուսովսկի համանման յայտագրեր
ուղարկեցին Բէլգրադի, Սօֆիայի, Բուխարէստի
և Յէտինիէի ուսուցիչ և ուսուցիչ ունեցողական
ներկայացուցիչներին Այդ յայտագրերի մէջ հա-
ղորդվում է, որ ուսուցիչ կայսրի և ուսուցիչական
կայսրի մէջ տեղի ունեցած մտքերի փոխանա-
կութեան ժամանակ, երկու Միապետները առիթ
ունեցան զո՞ղջացմանը ուղարկութիւն դարձ-
նելու գործունէութեան այն ուղղամիտ եղանա-
կի վրա, որով ընթանում են Սերբիայի, Բոսնի-
այի, Բուլղարիայի և Չէսլոագիայի կառավա-
րութիւնները եւրոպական թիւրքացի ներկայ
գործիւնեան ժամանակ: Գործունէութեան մի այդ-
պիսի եղանակ մանաւանդ հաճելի է երկու թա-
ղաւորներին այն պատճառով, որ նրանք հա-
տառապէս վճռել են պահպանել ընդհանուր իւս-
դադութիւնը կարգի և statu quo-ի սկզբունքնե-
րի հիման վրա»:

ԼՕՆԴՈՆ, 19 ապրիլի: Լարիսա մանկու ժա-
մանակ թիւրքերը գտան 14 սանտիմետրանոց
բոլոր խնամքները, որոնցով զինուորված էր
ամբողջութեամբ, չը փնտրված: Գտնված է զէպերի
առաջին քանակութիւն: Անհատականաւ է, թէ
ինչի հեռացան յոյները մի այդպիսի զօրքը գիւ-
րից: Թիւրքերը քաղաքացիական նահանգապետ
նշանակեցին Լարիսայում: Կողովուրդը արգել-
ված է ամենախիստ պատիժների սպառնալիքով:
Յուսուց ազգաբնակչութիւնը հրաւիրում են վե-
րադառնալ: Վճիռ քաղաքից, լուրերին նայած,
հեռացան յոյները: Յամենայն դէպս, Լարիսա-
յում րօպէ առ րօպէ սպասում են, որ թիւրքե-
րը կը գրաւեն Վճիռ:

ԼՕՆԴՈՆ, 19 ապրիլի: «Daily Chronicle» լրագ-
րին ֆարսալից հաղորդում են. «Թիւրքերը չո-
րեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ յարձակման
էին ենթարկում Վիլյուպիս: Յարձակումները
երկարատեւ և կատաղի էին, բայց անապահա-
րեամբ վերջացան: Թիւրքերի կորուստները մեծ
են, յոյներինը—պակաս:

ԱՌԷՆԻ, 19 ապրիլի: Մինիստրների խորհուր-
դը վճռեց ուղարկել Տէօպօկիս և Գամբուս մի-
նիստրներին ֆարսալ ծանօթանալու համար
զօրքի դրութեան հետ:

Կ. ՊՈԼԻՍ, 19 ապրիլի: Բ. Գուրու էլի մի շա-
բաթ ժամանակ տուեց յոյներին մնալ Թիւրքիս-
յի սահմաններում:

Ռուսաց «Донец» պահանաւը գնաց զէպի
Աթին:

Յոյները յետ են քաշվում Էպիրոսից:

ԼՕՆԴՈՆ, 19 ապրիլի: «Times» լրագրին Լա-
րիսայից հեռագրում են. «Վճիռ չըջանալու հետեւ
գտնվող թիւրքացի հեծելազօրքը սպասում է հե-
տեւի զօրքի գալու, որը կը մօտենայ այսօր:
Քաղաքի գրաւումը սկսելու համար: Յոյների մե-
ծամասնութիւնը ծովային ճանապարհով ուղևոր-
վեց զէպի Պիրէս»:

Կ. ՊՈԼԻՍ, 19 ապրիլի: 5 բառային, Մուս-
տաֆա փաշայի հրամանատարութեամբ, յետ
միջոցին յոյներին Բէլգրադի կամ Պէնտէպի-
գալի չըջանալու վրա տիրապետող բարձրու-
թիւններին, և գրաւեցին այդ գիւղերը:

ԼԱՐԻՍԱ, 19 ապրիլի: Ելեւթ-փաշայի մօտա-
պետի իր չառնով: Լարիսայում հանգստութիւն
է տիրում, առեւտուրը վերականգնեց: Էլեւթ-փաշա-
յի հեռագիրը հաղորդում է, որ Գաիլի փաշայի
առաջին զօրաբաժինը գրաւեց Տրիպլիս:

ԱՌԷՆԻ, 20 ապրիլի: Յուսուց զօրքերը կենտ-
րոնացան Արտալու, որի պաշարման համար
պատրաստվում են թիւրքերը:

Լուր է պտտում, որ մտադրութիւն կայ յետ
կանչել Վատսին:

Կ. ՊՈԼԻՍ, 20 ապրիլի: Էլեւթ-փաշայի զեկու-
ցադիրը.—ապրիլի 18-ին, երեկոյան, Վիլյուսի
նօցի մէջ ժամկէտ հեռադրութեան վրա, տեղի
ունեցաւ կռիւ, որը, ապրիլի 19-ին, առաւ-
տեան, վերականգնեց: Գրաւված են երեք ամբու-
թիւններ և խրամանների գծեր: Յոյները յետ
քաշվեցին զէպի այն գիւղը, որ գտնվում է գիւ-
ղի մօտ, Վիլյուսից: Զէպի արեւմուտք: Մէկ
բառային գրաւեց այդ գիւղը: Հաջի-փաշայի,
երկու բառայիններով, արշաւում է Վիլյուսի
նօցի վրա:

Թիւրքացի զօրքերի հրամանատարը Էպիրոսում
հեռագրում է. «Վիլյուսի մէկ բառային և երկու
բառարեւմտի, որոնք յարձակման են
թարկվելու պատճառով, հեռացան: Քարավան-
ապահով, յետ քաշվեցին զէպի կամուսանդու,
թողնելով ճանապարհի վրա մէկ թիւղանօթի:
Կամուսանդուի վրա տիրապետող բարձրութիւն-
ները գրաւեցին թիւրքերը»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ապրիլի: Այսօր Յարսիս-
Սեյօ գնացին Թագաւոր Կայսրը, Թագուհի Ալեք-
սանդրա Ֆէօդորովնա և Մեծ Իշխանուհի Օլգա
Նիկոլայովնա:

ՎԱՐՇԱՎԱ, 19 ապրիլի: Ապրիլի 19-ին առա-
ւելական կայսրը Էլեւթ-փաշայի Օտաօնի և սկիալի
հետ անցաւ Վարշավայի վրայով, ուղևորվելով
զէպի Վիեննա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 ապրիլի: Ապրիլի 19-ին, ա-
ռաւտեան 10 1/2 ժամին, արտասահմանից ժա-
մանեց պրինցուհի Իրինա՝ Պրուսական Հէնրիխ
պրինցի ամուսինը, Թագուհի Կոյսրուհի Ալեք-
սանդրա Ֆէօդորովնայի քայլը: Ալեքսանդրով-
նայ կայսրանուսով պրինցուհուն զինուորացին
Թագաւորը, Կայսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորով-
նա, և գնաց Ալեքսանդրովսկի պալատը:

Ապրիլի 19-ին ճանապարհ ընկան Գաուրիս
Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա, Մեծ Իշխան
Միխայիլ Ալեքսանդրովիչ և Մեծ Իշխանուհի
Օլգա Ալեքսանդրովնա:

ՆԻՒԵՐՈՎ, 20 ապրիլի: Վէստ-նիդերլանդ երկ-
րաշարժի ժամանակ կոտորվեցին հարիւրաւոր
մարդիկ. շատ փետներ են հայտնվում: Երկրա-
շարժի կենտրոնն էր Մոնթրալ, բայց մարդ-
կանց մեծամասնութիւնը ոչնչացաւ Գիւնդելու-
պում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ Ապրիլի 18-ին

Լճագործի վրա 10 ֆունտ արծէ. . .	93	90	4
Բեքլինի վրա 100 մարկ — . . .	46	95	0
Պարիզի վրա 100 ֆրանկ — . . .	37	35	0
Ոսկի — . . .	արծէ	—	—
Մաքսային կուպոններ — . . .	149	—	—
Բորսային դիսկոնտ — . . .	5 1/2	—	70/0
4 1/2 պետական րէնտա . . .	93 3/4	—	—
Ներքին 5 1/2 տաւջին փոխառութ., 2793 1/4 —	—	—	—
— երկրորդ —	244	—	—
5 1/2 քառ. թղթ. աղս. կալ. բանկի 210 1/2 —	—	—	—
5 1/2 պետական երկաթուղ. րէնտա —	—	—	—
4 1/2 ներքին փոխառութեան . . .	98 1/2	—	—
4 1/2 քառ. թղթ. աղս. կալ. բանկի 101 1/8 —	—	—	—
Աղս. կալ. Պետ. բանկի խաղաղութ. —	—	—	—
4 1/2 1/2 վկայաւ. քառ. րէնտ. 101 3/8 —	—	—	—
Փոխ. կրեդիտ. բանկ. մետաղ. —	—	—	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. —	—	—	—
Ընկերութեան օրիգինալներ. 101 3/4 —	—	—	—
Մոսկվայի քաղաք. օրիգինալներ. 101 1/4 —	—	—	—
Օրէնսայի —	100	—	—
Թիֆլիսի —	98 3/4 —	—	—
Թիֆլիսի կալ. բանկի 6 1/2 —	101	—	—
5 1/2 —	99 3/8 —	—	—
Քուրիայի —	101	—	—
5 1/2 —	99 3/8 —	—	—

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԻՍԹԱՆ

Հրատարակիչ՝ ԱՆԻՐԷԱՍ ԱՐՄՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ Ա Ս Ս Ա Ժ

Բժիշկների զեկավարութեան տակ, պարապում
են՝ զանազան հիւանդութիւնների բժշկելով:
ՄԱՍԱՍՈՎ, և առաջական ԳԻՄՆԱՍՏԻԿԱՅՈՎ:
Հիւանդների ընդունելութիւնը՝ 5 1/2—6 1/2 ժամը
երեկոյան: Ա. Հալեան փողոց, № 19:
32—147 ԳԵՌԳ. ԽՈՐՈՐԴԱՆՑ

ՄՈՒՐՏԱԳ

Ունենալով մի քանի աղատ ժամեր, կամենում
է նրանց գործադրել ԱՆԳԼԻՆԵՆ ԳԱՆԵՐԻ Հա-
մար: Նա ապահովում է ուղիղ արտասանութիւն
եթէ չորս կամ աւելի անհիշեց ցանկանան միասին
զատ վերցնել: Նա կը վերցնի համեմատաբար
փոքր վարձատրութիւն: Հասցէ՝ Բ. Մարտիրո-
սեանցի տան բաղուն, Ալեքսանդրեան այգու
դիմաց: (№ 39) 5—5

ԿՕՆԿՈՒՐՍՍՅՈՒՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

որ հիմնված է անանկ Խլան Բանալիստուրովի Տէլեաֆօնի գործերի համար, սրանով յայտարա-
րում է, որ ինքն նորից դուր է հրապարակական աճողի այս ապրիլի 27-ին, 12 ժամին, կոնկուրսի
չինսութեան մէջ, Նիկոլայիվսկայա փողոցի վրա, տուն № 81, վեց դատարկ հողաբաժինն էր,
իւրաքանչիւր հողաբաժինը 256-ից մինչև 317 քառ. սաժէն տարածութեամբ, որոնք գտնվում են
Մոսկովսկայա փողոցի վրա, Ալեքսանդր Ֆիլաթովի գիւղի, կայսրանի մօտ, ուր առաջ
գտնվում էր Տէլեաֆօնի փոստի պահեստը: Պայմանները կարելի է տեսնել կոնկուրսային վար-
չութեան մէջ ամեն օր՝ երեկոյան 5-ից մինչև 6 ժամը: Աճողից առաջ իւրաքանչիւր հողաբաժ-
նի համար անպատճառ պէտք է 500 ռ. գրաւական մտցնել, առանց որի ոչ ոք չէ կարող մաս-
նակցել աճողիցին:

1—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

խորհուրդը յայտնում է ի գիտութիւն ընկերութեան անդամներին, որ ապրիլի 27-ին, կիրակի երե-
կոյան ժամը 7-ին, Թիֆլիսի գումայի գահինում նշանակված է արտակարգ ընդհանուր ժողով
որի պարագլուխը առաքիւնները լինելու են:

1) Քննութիւն և հաստատութիւն Բաթումի ճիւղի 1897 թ. նախահաշիւ և Արալայի
ճիւղի 1897 թ. յաւելումով նախահաշիւ:

2) Ընկերութեան խորհրդի մի անդամի և երկու փոխանդամի ընտրութիւնը:

3) Քննութիւն ընկերութեան 16 անդամների յայտարարութեան, որով լնդրում են բեկա-
նել մարտի 2-ի և 16-ի կայացած ընդհանուր ժողովների որոշումները, իբրեւ ապօրէն և խորհրդի
զեկուցումը ու կարծիքը նրա մասին:

Ընկերութեան անդամները հրաւիրվում են վերանորոգել իրանց անդամակցութիւնը, զիմեով
խորհրդի գրասենեակը, Սերգէեւսկայա փողոց № 16:

1—3

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ

ԵՐԵՎԱՆԻ, ապրիլի 22-ին

Ս Ի Ր Ո Ղ Ա Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ա Ս Կ Ե Ղ Ն Ե Մ Մ

Կայանալու է հայերէն ներկայացումն յօգուտ ՀԱՅՈՒՀԱՅՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Պիտի ներկայացնելու

Ա Ր Ի Բ Ա Ժ Ա Ն Վ Ե Ն Ք

Կօմ. Ալեքսանդրովի, Թարգմանութիւն Զիգանեանի

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Ի Ւ Ն

Վճարվել

Մասնակցողն էր և Երևան—Ս. Արդուլեան-Երկաթուղային, Օ. Բաղդասար, Ն. Մէլք-Փար-
սադեան, Օ. Գուրուսովսկի, Ս. Մովսիսեան, Ն. Լալեան, Կ. Լալեան, Ս. Արդուլեան, Օ. Գուր-
ուսովսկի, Վ. Մամիկոնեան, Պ. Քալանթարեան-Արաքսեան, Ա. Մանգլիսեան, Պ. Փրիլեան, Գ.
Խիզանեան:

3—3

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՅԱՆԱՍԻԱԿԱՆ ՆԱՍԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԻՆ ԲԱՐՍԵՅԻՆ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից:

Եւ հակառակ՝ Բաթումից Մարսէյ, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլիս: Մեկնում է Բաթու-
մից՝ չորեքշաբթի, ապրիլի 30-ին (մայիսի 12) ՄԻՆԵՐՈՎԻ չորեքշաբթի, նաւապետ ՇԵՂՏ և այդպէս
չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամի 4-ին ճաշից յետոյ: Բա-
թումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տուսակներ արվում են սովորականից

Պակաս գն է րօվ: Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնները
ստանալու համար թող բարեհաճեն զիմե ընկերութեան գործակաւորներին:

ԲԱՐՍԵՅԻՆ—Ս. Վիլյուսի Գ. Արդուլեան, Նաքէլեմայիս: ԹԻՖԼԻՍԻՆ—Ս. Գ. Բարեկեան:
Նեանին, Սիւնի փող. Նախկին Արքունու քարտէսարան: ԲԱՐՍԻՆ—Ս. Ս. Նիկոլայեան, Կիլիկեա-
կիսկայա հրապարակ: ՆՕՎՈՐՈՍԻՅԱՎ—Ս. Մեկսիօր Հերշիֆօրդերին: (№ 16) 10—20



ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՐԻՍԳՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀԵՂԿԱՆԱՆ ՄԻՋՈՒՆԱ, այն է հաստատ մաս մկներին, խլորչներին և ուրիշ կրծողներին
Այս միջոցը արտաբերում է այդ կենդանիներին զլուստարապէս բնակարաններից, այնպէս որ նրանք
չեն մնում գետնաբալիի տակ և չեն տարածում գարշահոտութիւն:

ՄԱՍԿԵՆԻ ԴԻՄԻՏՐՈՎ, ոչնչացնում է նրանց ընդմիջում: Նա շատ հաճելի հոտ ունի և
բիծ չէ թողնում ճեղքակողներին, կոնիկների և կարասիների վրա: Փոշիացնելով նրան, սենեակի օդին
հաճելի խորտիկներ են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեղը, ճանճը և մոծակները:

ՓՈՇՈՒ ՄԻ